ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ, ԺԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ, ԲՌՆԱԲԱՐՈՒԹՅԱՆ, ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	ԱՄՆ Բնակարանային Շինարարության և Քաղաքային Զարգացման Նախարարություն (HUD)	OMB Հաստատում թիվ. 2577-0286 Վավերական է մինչև՝ 06/30/2017թ.

Ձևաթղթի նպատակը՝ Կանանց նկատմամբ Բռնության մասին Օրենքը (Violence Against Women Act (“VAWA”)) որոշակի HUD ծրագրերի դիմորդներին, բնակիչներին և ծրագրի մասնակիցներին պաշտպանում է վտարումից, բնակարանային աջակցության մերժումից, բնակարանային աջակցության դադարեցումից՝ նրանց նկատմամբ ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման մասին օրենքների հիման վրա: Չնայած այդ օրենքի անվանմանը, VAWA-ի շրջանակներում պաշտպանության ապահովումը հասանելի է ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհերին՝ անկախ նրանց սեռից, սեռային գենդերային ինքնությունից կամ սեռական կողմնորոշումից:

Տվյալ Կամընտրովի Ձևաթղթի կիրառումը՝ Եթե Դուք VAWA-ի կողմից պաշտպանություն եք փնտրում Ձեր բնակարանային ապահովման մատակարարից, ապա Ձեր բնակարանային ապահովման մատակարարը կարող է Ձեզ գրավոր ծանուցում ներկայացնել, որտեղ կխնդրվի, որպեսզի Դուք փաստաթղթեր ներկայացնեք ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման դեպքի կամ դեպքերի վերաբերյալ:

Այդ խնդրանքին ի պատասխան՝ Դուք կամ Ձեր անունից հանդես եկող որևէ մեկը կարող է լրացնել տվյալ կամընտրովի ձևաթուղթը և այն ներկայացնել Ձեր բնակարանային ապահովման մատակարարին, կամ Դուք կարող եք տրամադրել ստորև ներկայացված երրորդ կողմի փաստաթղթերի տեսակներից որևէ մեկը.

(1) Փաստաթուղթ, ստորագրված Ձեր և գործատուի, գործակալի կամ զոհի ծառայության մատակարարող կամավորի, իրավաբանի կամ բժշկական ներկայացուցչի, կամ մտավոր առողջության մասնագետի կողմից (հավաքականորեն «մասնագետ»), որից Դուք աջակցություն եք ակնկալում ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման կամ դաժան վերաբերմունքի հետևանքներից: Փաստաթուղթը պետք է հստակորեն սահմանի, երդմնազանցության համար պատժի ենթարկվելու պայմանով, որ մասնագետը համոզված է նրանում, որ տեղի է ունեցել ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության, կամ հետապնդման միջադեպ, և որ այն համապատասխանում է HUD-ի թիվ 24 CFR 5.2003-ում նախատեսված կանոնակարգերի «ընտանեկան բռնություն», «ժամադրության ընթացքում բռնություն», «բռնաբարություն» կամ «հետապնդում» սահմանումներին:

(2) Դաշնային, Նահանգային, ցեղային, տարածքային կամ տեղամասային օրենսդրական գրասենյակի, դատարանի կամ վարչարարական գործակալության կողմից կատարված գրանցում; կամ

(3) Բնակարանային ապահովման մատակարարի հայեցողությամբ դիմորդի կամ բնակչի կողմից տրամադրված հայտարարություն կամ որևէ այլ վկայություն:

Փաստաթղթերի ներկայացում՝ Փաստաթղթերը ներկայացնելու ժամանակահատվածը՝ 14 աշխատանքային օր է, սկսած այն օրվանից, երբ Դուք Ձեր Բնակարանային ապահովման մատակարարից ստացել եք գրավոր ծանուցում, որտեղ խնդրվում է, որպեսզի Դուք փաստաթղթեր տրամադրեք ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման դեպքի վերաբերյալ: Ձեր Բնակարանային ապահովման մատակարարը կարող է, սակայն պարտադրված չէ, երկարացնել փաստաթղթերը ներկայացնելու ժամանակահատվածը, եթե Դուք ժամանակահատվածի երկարաձգում եք խնդրում: Եթե պահանջված տեղեկատվությունը չի ստացվում 14 աշխատանքային օրվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ Դուք ստացել եք փաստաթղթերը ներկայացնելու խնդրագիրը, կամ Ձեր Բնակարանային ապահովման մատակարարի կողմից տրամադրված որևէ երկարաձգված ժամանակահատվածում, ապա Ձեր Բնակարանային ապահովման մատակարարը չի պարտադրվում Ձեզ որևէ VAWA պաշտպանություն շնորհել: Տվյալ ձևաթղթի մատակարարումը կամ թողարկումը չի ծառայում որպես գրավոր հայց հավաստագրման համար:

Գաղտնիություն՝ Ձեր Բնակարանային ապահովման մատակարարին տրամադրված ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության, կամ հետապնդման դեպքի(երի)ն վերաբերող ողջ տեղեկատվությունը պետք է պահվի գաղտնի և չպետք է մուտքագրվի տվյալների փոխանակում ենթադրող որևէ տվյալների հիմք: Բնակարանային ապահովման մատակարարի աշխատակիցները չպետք է այդ մանրամասներին հասանելիություն ունենան մինչև VAWA պաշտպանություն շնորհելու կամ մերժելու պահը, և այդպիսի աշխատակիցները չպետք է այդ տեղեկատվությունը բացահայտեն որևէ այլ իրավաբանական անձանց կամ անհատներին, բացառությամբ այն սահմանաչափի երբ բացահայտումը՝ (i) Ձեզ հետ գրավոր համաձայնեցված է սահմանափակ ժամանակահատվածում հրապարակման համար; (ii) պահանջվում է օգտագործելու աջակցության դադարեցման առնչությամբ վտարման դատավարության կամ լսման ընթացքում; (iii) այլապես պահանջվում է կիրառելի օրենքներով:

<u>ՊԵՏՔ Է ԼՐԱՑՎԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ, ԺԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ, ԲՌՆԱԲԱՐՈՒԹՅԱՆ, ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԶՈՀԻ ԿԱՄ ՆՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ</u>

1. **Զոհի կողմից գրավոր խնդրագիրը ստանալու ամսաթիվ**_____

2. **Զոհի անուն՝** _____

3. **Ձեր անունը (եթե զոհը Դուք չեք)՝**_____

4. **Վարձակալման պայմանագրում ներառված այլ ընտանիքի անդամ(ներ)ի անունները՝**_____

_____

5. **Զոհի բնակության վայրը՝** _____

6. Մեղադրվող հանցագործի անունը (եթե հայտնի է և կարող է ապահով կերպով բացահայտվել)՝ _____

7. Հանցագործի հարաբերակցական կապը զոհի հետ՝ _____

8. Միջադեպ(եր)ի ամսաթիվը(երը) և անգամ(ներ)ը (եթե հայտնի է)՝ _____

_____

10. Միջադեպ(եր)ի վայրը՝ _____

Ձեր սեփական բառերով հակիրճ նկարագրեք միջադեպ(եր)ը՝

_____

_____

_____

_____

Սույնով հավաստագրվում է, որ տվյալ ձևաթղթում ներկայացված տեղեկատվությունը ճշմարիտ է և ճշգրիտ՝ իմ համոզմունքով և հիշողությամբ, և որ կետ 2-ում վերը նշված անձը հանդիսանում է կամ հանդիսացել է ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ: Ես ընդունում եմ, որ կեղծ տեղեկատվության ներկայացումը կարող է վտանգի ենթարկել ծրագրին իրավասու լինելու հարցը և կարող է հիմք հանդիսանալ ընդունման մերժման, աջակցության դադարեցման կամ վտարման համար:

Ստորագրություն _____Ստորագրված է (ամսաթիվ) _____

Հանրային հաշվետվության ծանրաբեռնվածությունը՝ տվյալ տեղեկատվության հավաքագրման համար պահանջվող հանրային հաշվետվության ծանրաբեռնվածությունն ըստ գնահատականի միջինում կկազմի 1 ժամ մեկ պատասխանի համար: Դա ներառում է տեղեկատվության հավաքագրման, վերանայման և զեկուցման ժամանակը: Տրամադրված տեղեկատվությունը պետք է օգտագործվի բնակարանային ապահովման մատակարարի կողմից՝ հավաստագրում հայցելու առ այն, որ դիմորդը կամ բնակիչը հանդիսացել է ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ: Տեղեկատվությունը ենթարկվում է VAWA օրենքի շրջանակներում սահմանված գաղտնիության պահանջներին: Տվյալ գործակալությունը կարող է չհավաքել այդ տեղեկությունները, և Դուք պարտավոր չեք լրացնելու այս ձևաթուղթը, եթե այն չի պարունակում Վարչական և Բյուջեի Կառավարման Գրասենյակի (OMB) ընթացիկ վավերական վերահսկման համարը: